Նորայր Մանվելյան

Գեղեցիկ է ճախրում օդում

Գեղեցիկ է լարված օդում,

Իմուքո միջև կա՝ առնվազն մեկ ծով,

մի քանի խոշոր գետ, բազում ակներև

ու գոյություն չունեցող սահմաններ,

հազարավոր տարիների պատմություն,

թափված արյուն և արցունքներ

Եվ կյանքի հորդող անձրևաջրից թորած

Կում-կում

Երջանկություններ:

Դու գեղեցիկ ես, գուցե գեղեցիկն ես դու,

հազարավոր կիլոմետրերն ասես մեր՝ կամք ունենալու պես սին մի բան լինեն:

Դրանք չկան, ինչպես և չկա ապագան:

Կա միայն հիման, երբ դու հրավիրում ես ինձ հագեցնելու ծարավս

հոգուդ

ջինջ

աղբյուրից:

Ինձ Ցելան ես ուղարկում, Ֆրիդայի, Վուլֆի մասին ֆիլմերը

քո ձայնն ու քո չերևացող ժպիտը:

Ես այն ավելի լավ եմ տեսնում,

Քան բոլոր անցորդ մարդկանց ժպիտները, որ հանդիպում եմ աշխատանքի շտապելիս

Մ ե տ ր ո յ ու մ:

Քեզ տիրանա՞լ: Ինչպե՞ս կարելի է տիրանալ սեփական կապկանքների դեմ

Ամբողջ կյանքում պայքարող մեկին, ով գիտի ես-ից

Ազատ լինելու դառնիրական համն ու սովորականության մարդկային հոտը:

Տիրանա՞լ, որ առնել ափի մեջ նրան, ով ծնվել է՝ լինելու,

Առանց երևակայան «համար»-ի ու պաթեթիկ «հանուն»-ի:

Դու թանկ ես ինձ համար, նույնիսկ եթե մեզ անջատող ծովերը

Մի օր օվկիանոս դառնան ու լցնեն-տանեն

Քո մասին հուշերը:

Գեղեցիկ է լարված օդում,

Քո նուրբ շնչով: